

կողմնորոշումները մէջ: Նա դրում է. «Նւհակառակ լինելն լեզույ մարդարէիցն. և քնոյ երազօք մոլորեցուցանելն զնոսա...»¹³: Նման թմբադեղերի դէմ պայքարելու լաւագոյն դեղորայքներից մէկը և վճռականը Մխ. Գոշը համարեց համընդհանուր ձրի կրթութիւնը, որ կը տանէր դէպի հայ ժողովրդի գիտակցական մակարդակի բարձրացումը: Դրանով նա հանդէս իսկական, շօշափելի հայրենասիրութեան զաղափարին, որը կը բարձրացուէր բանականի աստիճանի:

Մխ. Գոշը ցանկանում էր, որ իւրաքանչիւր մարդ-անհատ գիտակցի այդ և գիտակցարար հանդէս զայ մոլորեցնող և թմբեցնող մարդարէութիւնների ու երազների դէմ: Իսկ դրան հասնելու համար անհրաժեշտ էր, որ գիտութեան օջախների դռները բաց լինէին բոլորի առաջ: Նա դրում էր, որ իւրաքանչիւր մարդ անհատ պէտք է փրկի ու սրբութեան նման միշտ բարձր պահի ազգային ժառանգութիւնը, ոչինչ չխնայի ազգի փրկութեան համար, անդամ կեանքը, որովհետև մէկի մահը բազումների ազատութիւն է նշանակում: Նա դրում է. «Փրկեա զժողովուրդն քո և օրհնեա զժառանգութիւն քո, հովեա և բարձացո մինչև յաւիտեան: Զի գին արեան քո է և ազատեալ չարչարանօք: Միշտ քաւեսցես զանուտք կատարելով խոստումն զանդուցեալսն յանուն քո, ասելով այս է մարմին իմ, որ բաշխի ի թողութիւն բազմաց»¹⁴:

Նման գեղեցիկ ու խորիմաստ զաղափարը մատչելի կը լինէր հայ ժողովրդի իւրաքանչիւր անդամին միայն լուսաւորութեան միջոցով, որն իր հերթին կը նպաստէր նրա համախմբուելուն, քաղաքական քնից արթնանալուն և, վերջապէս, մշակութային կեանքի էլ աւելի զարգացմանը: Այսպիսով Մխ. Գոշը գիտական հիմնաւորում տուեց գիտակցութեամբ մահուան հարցին, որն առաջադրել էին նրա նախորդները, մասնաւորապէս Եղիշէն: Առաջնութիւնը տալով հասարակականին, ընդհանուր ազգային շահերին, Մխ. Գոշը միաժամանակ աշխատում էր ցոյց տալ, որ հասարակականը և անհատականը դռնուում են մշտական փոխակապուածութեան մէջ, մէկը առանց միւսի գոյութիւն

ունենալ չի կարող: «Ի բազմականս զհասակէր մի լինիր, — դրում էր Գոշը, — այլ դամենեսեան առաւել մեծարեա քան զքեզ»¹⁵: Եթէ մարդ անհատը գիտակցեց ազգային ընդհանուր շահը, ապա նա առարկայօրէն կը գիտակցի նաև իրենը, սա էր զոչեան միտումը: Պատահական չէ, որ նա դրեց անհատի դերի հարցը հասարակութեան մէջ: Մարդը ունենալով կամքի ազատութիւն, այն պէտք է օգտագործի ի շահ հասարակութեան:

Առականերից մէկում Մխ. Գոշը դրում է. «... որք ծուլութեամբ զկեանս և առանց դործոյ կամին անցուցանել. որոց արժան է այնքան զդործն փոխել մինչ զի յանձն առցէ զամենայն ինչ և նովաւ զամենայն, քանզի ոչ է հնար քաղաքալարիլ անդործ»¹⁶:

Գնելով աշխատանքի, որպէս հասարակութեան գոյութեան միակ երաշխիքի հարցը: Մխ. Գոշը նկատի ունէր միայն հասարակական հանրօգուտ աշխատանքը: Որովհետև աշխատանքը կարող է լինել և անօգտակար: Այս միտքը նա արտայայտել է իր մի շարք առականերում: Այսպէս՝ սոճին եւ բամբակենին վէճի են բռնում միմեանց հետ: Առաջինը պարծենում է, որ ինքը բարձր է ու ստուարածաւալ: Բամբակենին պատասխանում է, որ, ճիշտ է, բարձր ես ու խիտ, սակայն անօգտակար, իսկ ես թէև կարճ եմ ու տկար, սակայն բազմաշահ եմ, կարող եմ օգտակար լինել ոչ միայն հարուստներին, այլև աղքատներին և փոխարինել որպէս հանդերձ ոչխարի բրդին, վուշին, մետաքսին, իսկ դու այդպիսի կարողութիւնից զուրկ ես: Առաջինը նպատակը, ասում է Գոշը այն է, որ. «... զոմանց զոր ունին ի տեսակ և ի հասակ, և պատահին բազում անդամ անօգուտ կենցաղոյս, նմանապէս և հոգևորացն. զայլս յականէ խոտեն զտկարս և զկարճս հասակաւ, որք և պիտանիք իցեն ի բազում իրս մարդկան և փարթամացուցիցիչք, որք և յիրաց անտի գովին, և նոքա յանդիմանին ի սնտոի դործոց»¹⁷:

Առակում Մխ. Գոշը առարկայօրէն հանդուում է նաև ձևի ու բովանդակութեան փոխյարաբերութեան հարցին և առաջնութիւնը տալիս բովանդակութեանը: «Բարձր ես և ստուար, սակայն անօգուտ... իսկ ես թէ-

¹³ ՀՄՍՀ Մատենադարան, ձեռագիր նո. 5179, էջ 123ա, իսկ Գատաստանազրբում յատուկ յօդուած է սահմանուած նման մարդարէութիւնների դէմ, էջ 288:
¹⁴ Սոփերք հայկականք, 4. 23, էջ 24—25:

¹⁵ Սոփերք հայկականք, 4. 23, էջ 49:
¹⁶ Մխ. Գոշ, Առականք, էջ 85:
¹⁷ Նոյն տեղում, էջ 54—55 (ԺԹ):

պէտ փանաքի և տկար, այլ բազմաշահ ոչ միայն մեծատանց, այլև աղքատաց...»:

Ըստ Մխ. Գոշի անհատը հասարակութեան մէջ զնահատուում է ոչ թէ իր արտաքին տեսքով, այլ իր գործունէութեամբ, իր կատարած հանրօգուտ աշխատանքով:

Մխ. Գոշը ոչ միայն գովերգում է աշխատանքը, այլև այն համարում մարդու և հասարակութեան գոյութեան անհրաժեշտ պայման, ինչպէս նաև մարդ անհատին ճարտարական միջոց: Յայտնի է, որ, նաչելու լաւագոյն միջոց: Յայտնի է, որ, ըստ միջնադարեան պատմահայեցողութեան, մարդը համարում էր անձանաչելի մի էակ, նրա հոգու ներսում կարող է թափանցել միայն ամենակարող Աստուած: Մխ. Գոշը գտնում էր, որ մարդը ճանաչելի է, սակայն պոնում էր, որ մարդը ճանաչելի է, սակայն ո՛չ նրա հոգու (սրտի) ներսը թափանցելու միջոցով, որն անհնարին է, ո՛չ էլ աչքերի միջոցով, որոնք խարուսիկ են, այլ մարդու կատարած աշխատանքի արդիւնքով: «Ես... կատարած աշխատանքի արդիւնքով, — քննեմ զսիրտս և փորձեմ զերկամունս, — դրում էր նա, — տալ ըստ իւրաքանչիւր ճարտար հոգու և ըստ դործոյ պողոյ նապարհաց իւրոց. և ըստ դործոյ պողոյ նապարհաց իւրոց ոչ զիտէ. և իւրոյ, զի զսիրտ մարդոյ մարդ ոչ զիտէ. և յաչս նոցա բազում անդամ ձեանան»:

Այսպիսով զժուար չէ նկատել, որ Մխ. Գոշը մարդ-անհատին ճանաչելու ու զնահատելու, թերևս միակ ճիշտ ուղին համարեց նրանց կողմից կատարուած հանրօգուտ աշխատանքը: Ինչպիսին մարդու աշխատանքն է հասարակութեան մէջ, այնպիսին էլ պէտք է լինի տուեալ անհատը: «Ո՛ր անպարտոյն, է լինի տուեալ անհատը: Ո՛ր անպարտոյն, է զտունի ի պողոյ արժան է ճանաչել, և ոչ ի տեսակէ»¹⁸, — դրում է նա:

Իմաստասէր Գոշը, ինչպէս տեսնում ենք, մարդկանց ճանաչելու հարցում շատ աւելի առարկայական մտածող է, քան միջնադարեան իդէալիստ: Նա գտնում էր ինչպէս հասարակ, այնպէս էլ բարձր գասին պատկահարող մարդկանց, ընդհուպ մինչև թագաւորին ճանաչելու ու վերադնահատելու հարցը: Գոշեան նման միտումը ունէր իր հիմքը: Քիչ չէն պատմական այն փաստերը, որ իշխանները, թագաւորները ու հոգևոր հայրերը կողմից վարած ոչ ճիշտ քաղաքականութեան հետևանքով երկիրը զնայել էր գէպի քայքայումն ու անկումը: Երկիրը զրանից, Գոշը թաղում էր տալիս, որ թագաւորներին, խորհուրդ էր տալիս, որ թագաւորներին,

իշխաններին, գատաւորներին ու հոգևոր հայրերին պէտք է դատել (քննելու, ճանաչելու իմաստով) ոչ թէ նրանց զէրքից, համաճարեցից ու արտաքին տեսքից ելնելով, այլ նրանց կատարած գործերից: Վատ գործերի հեղինակները չեն կարող լաւը լինել կամ հակառակը: Գոշը դրում է. «Նշանակ բերէ առակս զանընտրող դատողս՝ զթագաւորս և զիշխանս և զգատաւորս և զառաջնորդս եկեղեցոյ՝ զնոսա յանդիմանելով, զի անփորձապէս դատապարտեն, զի ճշդիւ զիտելի է ի դործոց նոցա... ի պողոյ նոցա ծանիջիք զնոսա և ոչ ի տեսլենէ կամ ի համբաւէ դատել, որով և բազում վնաս դործի՝ զբարիս իրբև զչարս խոշտանկելով»¹⁹:

Ինչպէս ամենուրեք, այստեղ ևս իր խօսքը օրինականացնելու միտումով նրան կրօնական երանգաւորում էր տալիս. «Ըստ նախկին երանգաւորում էր տալիս. «Ըստ որում Տէրն իսկ ասաց»: Սա շատ կարևոր հարցադրում էր, որովհետև մարդիկ չպէտք է կուրօրէն դատեն կամ ճանաչեն. հիմք ընդունելով նրանց սոցիալական ծագումը, այլ դուռնելով նրանց սոցիալական ծագումը, այլ պէտք է ճանաչեն նրանց իսկ կատարած գործերի արդիւնքով: Կ. Մարքսը մարդ անհատի գնահատման շափանիչ համարում էր նրա կենսագործունէութիւնը. «Ինչպիսին անհատներին կենսագործունէութիւնն է, այնպիսին էլ նրանք են»²⁰: Գոշուար չէ նկատել, որ Մխ. Գոշը վերթէ նոյն ձևով դրեց անհատի ճանաչման ու զնահատման հարցը:

Նա աշխատում էր վերացնել այն անտեսանելի պատնէշը, որ դարեր շարուտակ ստեղծուել էր թագաւորներին և իշխաններին ժողովրդից սահմանազատելու համար: Այսպիսով, Մխ. Գոշը թագաւորական իշխանութիւնը կամ արքունիքը իր անհատի իշխանութիւնը կամ ժողովրդին ու տեղաբնակիցներին դարձնում նրան: Դրանով նա ուղղապես կիրառեց իր քաղաքական գիտելիքները, իշխանները ու հոգևոր առաջնորդները մասին դատողութիւններ անելը սրբապղծութիւն էր: Մի առիթով խօսելով առակաների՝ որպէս հասարակական ու քաղաքական կեանքը ընդհանրացնող ստեղծագործութիւնների նշանակութեան մասին, Հեղեղը դրում է, որ թէև առակաները վերցւում են մեր ամենօրեայ

¹⁹ Մխ. Գոշ, Առականք, էջ 54 (ԺԸ):
²⁰ К. Маркс и Ф. Энгельс, Сочинения. Т. III, стр. 19.

¹⁸ Մխ. Գոշ, Առականք, էջ 54 (ԺԸ):

